

սանդուխներուն, իրենց հայրենիքէն վտարական, գոհարակուռ ձեռքերով, երբ լաթ կը լուսային, կամ անհաւասարելի գրաւչութեամբ իրենց աչքերը կը գործածէին՝ փողոցէն անցնողներուն ծաղիկ ծախելու: Մարդեր, Պոլիս կամ Գահիրէ, Աթէնք կամ Փարիզ: Տարօրէն խոր: Հիմնովին տարբեր Արեւելքին ընտանի բոլոր ցեղերէն: Ու հիմա կը խորհիմ՝ այնքան ալ հաշտ ընկեր Մաթիկին զգայնութեան: Գիրք մը չի բաւեր այսօր ինծի, այդ մարդոց ներքին, ինչպէս արտաքին գիծերը վերլուծելու: Սեւ ու ֆերմակը, անկարելի բնականութեամբ մը ոչ թէ քով քովի, այլ նոյն մակարդակի: Ու շատ աւելի մեծ, խոր, իրաւ, զրկանքը հանդուրժելու, կեանքը բաշխելու, տառապանքը հագնելու ու վայելքը ոսկեզօծելու արարքներուն մէջ, զոհողութեան, հոգեկան այլայլման աղբիւրներէն, քան ինչ որ յաջողած է տալ եռամեծ Տոսթոեւսկին, իր վէպերով: Մաթիկ հաղորդ էր այս ամէնուն: Չեմ հարցնէր հիմա, թէ ինչու այնքան կը մեծցնէր անիկա հարստութեան ու աղքատութեան սա տեսարանները մերօրեայ մեծագոյն կրօնքին: Կը զգայիր, որ անոնց իր աշակերտութիւնը տեսարանելուն մէջ ունէր ծանր հաճոյք: Չրլլային իր մօրուքիկը, լեզուին արագ ու բնական վազքը, պիտի մղուէի թերեւս մեր ժամուն պատկերներէն մէկէն փախած առաքեալ մը ընդունելու զինքը, քանի որ կու տար այդ մարդերը, խորունկ երկիւղածութեամբ, աչքերը գրեթէ փակ, անշահախնդիր ու բաղձազերծ յեղումով: Չափազանցութի՞ւն: Կար անշուշտ: Այդ պատմումին մէջ անիկա կը վարագուրէր անոնց արտաքին charpente, աւելի պայծառ ցայտեցնելու համար հոգեկանը, ինչպէս կ'ընեն միջին դարու մեր միամիտ նկարիչները՝ մարմնեղէն այլանդակութիւնները լուծելով լոյսին կամ կրակին ամպէ մշուշին մէջ, աւելի պայծառ արտափայլելու համար աչքերուն, աւելի ճիշդը՝ նայլածքին անժուժելի գեղեցկութիւնը, գրաւչութիւնը: Սա չափազանցումը կ'անդրադառնար սակայն պատկերացումին, զայն ընելով տարտամ, անբաւական: Մաթիկին